ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՍՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*[1]

ԼԵՋՎԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳԼՈՍՍԱԼԱԼԻԱՅԻ ՄԱՍԻՆ (ՄԱՍ Գ.)

Ինչպես արդեն նշել ենք[2], ժամանակակից պենտեկոստալ շարժման ջատագովները, որպես կանոն, հիմնվում են Ս. Գրքի հետեւյալ համարների վրա. Մարկ. ԺՁ. 17-18, Գործք Բ. 1-21, Ժ. 44-48, ԺԹ. 1-7, Ա. Կորնթ. ԺԲ.-ԺԴ. գլուխներ: Այստեղ, անշուշտ, կարեւոր է իմանալ, թե ինչ է նշանակում գլոսսալալիան նշված համարներում: Մանավանդ կարեւոր է իմանալ, թե ինչ առնչություն ունի այն Ս. Հոգու թվարկած նշանների հետ: Քանի որ կարող են լինել եւ այլ նշաններ, որոնք Ս. Հոգուց չեն, այլ մի ուրիշ հոգուց են բխում: Քրիստոնյաներիս համար անչափ կարեւոր է այդ զանազանության խնդիրը, որն ունի նաեւ իրական գործնական նշանակություն: Դա պատասխանն է այն հարցի, թե ինչպես պետք է իմանանք եւ զանազանենք նշանները, արդյո՞ք Ս. Հոգին է առաջնորդում, թե՝ մեկ այլ հոգի: Ի վերջո, քրիստոնյայի համար այդ ամենը կարեւոր է, քանի որ շարժվել մի սկզբունքով, որը չունի սուրբգրային հիմնավորումներ, անընդունելի է:

Հովհաննես առաքյալն էլ պատգամում է մեզ. Սիրելինե՛ր, մի՛ հավատացեք ամեն մի հոգու, այլ փորձեցե՛ք հոգիները, թե արդյոք Աստծո՞ւց են, որովհետեւ բազում սուտ մարգարեներ են երեւան եկել աշխարհում[3]: Հետեւաբար պարտադիր է ամեն բան քննել, ստուգել եւ հետո վերջնական եզրակացության գալ: Անգամ Բերիայի քրիստոնյաները, լսելով Պողոսին՝ «ընդունեցին նրա խոսքը, ամբողջ ժամանակ քննում էին գրվածքները՝ իմանալու, թե այդ բաները այդպե՞ս են» (Գործք ԺԷ. 11):

Պողոս առաքյալը, լավ հասկանալով Կորնթոսի եկեղեցու վիճակը, գրում է. «Գալով հոգեւոր շնորհներին, եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ չգիտենաք: Գիտեք, որ, մինչ հեթանոսներ էիք, ինչպե՛ս էիք գնում-գալիս անխոս կուռքերի մոտ»[4]:

Իր ժամանակի հունական շրջաններում իշխող հեթանոսության իրական վտանգը կանխատեսելով՝ առաքյալը իր առաջ դրված խնդիրն էր համարում, այդ ամենին հակառակ, ներկայացնել Սուրբ Հոգու գործունեության իրական դեմքը՝ ներկայացնելով եւ բացատրելով Ս. Հոգու նշանները, շնորհները, գործունեության ձեւերը: Ա. Կորնթ. Ժ. 19-20 համարներում[5] առաքյալը փաստորեն ասում է հետեւյալը.

---

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.-Դ.:

[2] Տե՛ս նախորդ համարը, էջ 125:

[3] Ա. Յովհ. Դ. 1-2:

[4] Ա. Կորնթ. ԺԲ. 1-2: Հունարենում՝ Οἴδατε ὅτι ἔθνη ἦτε πρὸς τὰ εἴδωλα τὰ ἄφωνα ὡς ἂν ἤγεσθε ἀπαγόμενοι:

[5] Հունարենում՝ τί οὖν φημι ὅτι εἴδωλον τί ἐστιν ἢ ὅτι εἰδωλόθυτον τί ἐστιν; ἀλλ᾽ ὅτι ἃ θύει τά ἔθνη, δαιμονίοις θύει καὶ οὐ θεῷ οὐ θέλω δὲ ὑμᾶς κοινωνοὺς τῶν δαιμονίων γίνεσθαι. Հայերենն է՝ Իսկ արդ,

կուռքերի ետեւում կանգնած են դեւերը, որոնք կռապաշտության մեջ գտնվողներին մոլորության են տանում: Ա. Կորնթ. ԺԲ. 2-ում օգտագործված է ἤγεσθε ἀπαγόμενοι (egesthe apogomenoi) բառերը, ուր ἀπαγόμενοι բառի արմատն է ἄγω, որ նշանակում է առաջնորդել, տանել[6]: Այսինքն, ի տարբերություն հեթանոսական դեւերի, որոնք մոլորության են տանում, եկեղեցու մեջ քրիստոնյաներին առաջնորդողը Սուրբ Հոգին է, որը նոր կյանքի է առաջնորդում: Եւ պետք է հստակորեն տարբերել այդ երկուսի գործունեությունը, մանավանդ գլոսսալալիայի, այսինքն՝ լեզվախոսության պարագային:

Սուրբ Հոգու գործունեության մասին Ինքը՝ Հիսուս պատգամեց իր Կտակը կազմող հատվածում (Յովհ. ԺԴ.-ԺԷ. գլուխներ): Նա Մխիթարիչ է, Հոգին Ճշմարտության, եւ ուր էլ Նա առաջնորդի՝ այն պետք է լինի համապատասխան սուրբգրային ուսմունքի՝ «Երբ որ գա Նա՝ Ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ. որովհետեւ ոչ թե ինքն իրենից կխոսի, այլ ինչ լսի, այն կխոսի. եւ գալիք բաների մասին կպատմի ձեզ» (Յովհ. ԺՁ. 13):

Այսինքն՝ Ս. Հոգին մոլորության առաջնորդող չէ, նա տակավին չի առաջնորդի ոչ բնական, գայթակղիչ երեւութների, այնպիսի տարօրինակ վարքի, որ կասկածների տեղիք պիտի տա եւ այլն: Երբեք Սուրբ Հոգին հպարտության չի առաջնորդի մարդուն: Առաքյալը, անշուշտ, չի մերժում, որ հեթանոսներին էլ առաջնորդող հոգի կա, միայն թե այդ հոգին Աստծո Հոգին չէ: Աստծո Հոգին եկեղեցում առաջնորդում է քրիստոնյաներին՝ ճանաչելու Իրեն, քայլելու ճշմարտության ճանապարհով եւ ոչ թե տարօրինակ ու անիմաստ ուղղություններով, որն անհասկանալի է, թե ուր է տանելու:

Ամեն նորություն չպետք է կուրորեն ընդունել, այլ պետք է քննել, ինչպես ասում է առաքյալը. «փորձեցեք ամեն ինչ, բարին ամուր պահեցեք» (Ա. Թեսաղ. Ե. 21): Այս մոտեցումը անչափ կարեւոր է, մանավանդ, Ս. Հոգու շնորհների պարագային: Այսօր, համացանցի առկայության պարագային, այս աշխարհում ամեն բանի կարելի է հանդիպել, եւ հաճախ, սուրբգրային համարներ մեջբերելով, անգամ ոչ սուրբգրային ուսմունքների քարոզչության[7]:

Գլոսսալալիայի երեւույթը քննության առած շատ մասնագետներ այդ երեւույթը համարում են էքստատիկ վիճակում գտնվող մարդու անիմաստ բարբաջանքը, որն դասական իմաստով, լեզու չէ[8]: Բնական է, որ գլոսսալալիայի երեւույթը պիտի հետաքրքրեր ժամանակակից հոգեբաններին եւ լեզվաբաններին: Այդ առումով կան բավականին շատ ուսումնասիրություններ՝ երեւույթը գիտական քննության ենթարկելու վերաբերյալ, որոնք հիմնականում ցույց են տալիս, որ գլոսսալալիայի երեւույթը բոլոր ազգերի, տարբեր մշակույթ ունեցող եւ կրող մարդկանց մոտ գրեթե նույն ձեւով է արտահայտվում: Նույն անկապ հնչողություն ունեցող բարբաջանքներն են[9]: Ավելին, այն նեւրոֆիզիոլոգական մի պրոցես է, հայտ է գալիս տրանսային վի-

---

ահա ինչ եմ ասում. կուռքերին զոհաբերվածը մի բան է. եւ կամ՝ կուռքն ինքնին մի բան է: Ոչ, ինչ որ հեթանոսները զոհում են, դեւերին են զոհում եւ ոչ՝ Աստծուն: Չեմ ուզում, որ դուք դեւերին հաղորդակից լինեք. քանզի չեք կարող խմել եւ Տիրոջ բաժակը, եւ դեւերի բաժակը:

[6] **G. W. H. Lampe**, *A patristic greek lexicon,* Oxford, 1982, էջ 25:

[7] Օրինակ մորմոնները, Եհովայի վկաները: Առաջինները նոր գիրք մեջտեղ բերեցին՝ Մորմոնի գիրք անունով, վերջիններս էլ նոր թարգմանություն՝ ՆԱԹ, որը կապ չունի Ս. Գրքի հետ, ավելի իրենց ուսմունքի քարոզգիրքն է:

[8] Օրինակ՝ **William J.Samarin**, *Tongues of Men and Angels* (New York: Macmillan, 1972) xii, 227:

[9] Օրինակ՝ **Felicitas, D. Goodman**, Speaking in Tongues: A Cross-Cultural Study of Glossalalia (Chicago, 1972).]. **Felicitas, D. Goodman**, *"Glossalalia" in Encyclopedia of Religion* (New York: Macmillan Publishing

ճակում, որը գիտակցության փոփոխված վիճակի արտահայտություն է: Այն հիշեցնում է մարդու մանկական ժամանակ հնչունային ապարատի ձեւավորման փուլում ի հայտ եկող վոկալիզացիան[10]:

Աղանդավորները հաճախ են շահարկում որոշ փաստեր քսենոլալիա[11] երեւութի մասին, երբ ինչ-որ մեկը խոսել է իրական լեզուներից մեկով, կամ էլ մեռած լեզուներից մեկով: Հայաստանի պարագային, իրենց մոտ 40-ամյա «գործունեության» ընթացքում, մեր հայրենակից խարիզմատիկներից եւ ոչ մեկի մոտ չի արձանագրվել քսենոլալիայի երեւույթը, միայն անվավեր խոսակցություններ այն մասին, որ այսինչ տեղում, այսինչ եղբայրը խոսել է չինարեն, արաբերեն եւ այլն[12]:

Ժամանակակից որոշ մասնագետներ անգամ այդ ֆենոմենին տալիս են ձեռքբերովի կարգավիճակ, այսինքն՝ գիտակցականորեն կամ անգիտակցականորեն համայնքի անդամը ուր«սովորում է» լեզուներով խոսելը, ընդօրինակելով, նմանակելով ուրիշներին եւ ղեկավարի՝ «երեց եղբոր» ցուցումներին ենթարկվելով[13]:

Ուստի միանգամայն մերժելի է սուրբգրային հիմնավորում տալ ժամանակակից լեզվախոսությանը: Հետեւաբար դարձյալ պետք է գնանք նորկտակարանային այն համարներին, որոնց մասին ակնարկել էինք սկզբում, որպեսզի մի անգամ եւս ճշտենք, որ ժամանակակից լեզվախոսությունը ոչ մի կապ չունի պենտեկոստալ-խարիզմատիկ շարժումների հետ:

Դարձյալ պիտի դիտարկենք Վերնատան դեպքը: Առաջին հարցն այս է. ի՞նչ լեզվով էին խոսում առաքյալները: Բնական է, որ կա երկու հնարավոր պատասխան. ա) մարդկային հասկանալի լեզուներով, որոնք իրենք չգիտեին եւ չէին սովորել, եւ բ) ոչ մարդկային, անհասկանալի լեզուներով: Ընդ որում գոյություն չունեն ազգեր կամ ժողովուրդներ, որոնք այդ լեզուները կրողն են հանդիսանում: Այսինքն, պայմանականորեն միայն այդ լեզուները կարելի է անվանել «լեզու». դրանք անհասկանալի հնչյունների արտաբերություններ են:

Օրմանյանը միանգամից մերժում է երկրորդ տեսակետը, նշելով, որ այդ դեպքում այն չէր կարող հրաշք համարվել ականատեսների կողմից: Ի՞նչ հրաշք կարող էր համարվել «շամբիշ» խոսակցությունը[14]:

Հետեւաբար Վերնատանը լեզուների պարգեւը մարդկային լեզուներով խոսելու շնորհքն էր, որ Սուրբ Հոգին տալիս էր իր կամքի համաձայն:

Բնական է, որ երկրորդ տեսակետի ջատագովներ էլ կան (եւ բավականին շատ), որոնք պնդում են գլոսալալիայի՝ անհասկանալի արտաբերումների՝ Սուրբ Հոգու պարգեւ լինելը, վկայակոչելով Կորնթացիների առաջին թղթի համապատասխան գլուխները (Ա. Կորնթ. գլ. 12-14)[15]:

Մարկ. ԺՁ.17-18 համարների հրամանը՝ ուղղված առաքյալներին, բառացիորեն

House, 1987), 563-564.

[10] Անդ, էջ 564:

[11] Գոյություն ունեցող իրական լեզվով խոսակցություն, կամ իմաստային վոկալիզացիա:

[12] Ինչպես արդեն նշել ենք, դեռ Հայաստան եկած նրանց քարոզիչներից եւ ոչ մեկը հայերեն չի խոսել կամ քարոզել, որն անշուշտ ավելի ազդեցիկ կլիներ, այլ՝ թարգմանչի միջոցով է քարոզել:

[13] Հոգեբան Ջ. Կինդալն այդ ֆենոմենը անվանում է՝ ձեռքբերովի ֆենոմեն, տե՛ս **John Mndahl**, *The Psychology of Speaking in Tongues* (New York: Ha/per and Row, 1972), 74:

[14] **Մաղաքիա արք. Օրմանյան,** Համապատում, էջ 883:

[15] Այս գլուխների մեկնությանը մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

կատարվեցին Վերնատանը եւ Գործքի պատմություններում: Բայց այստեղից ամենեւին չի հետեւում, որ այդ գործընթացը ունի շարունակական բնույթ, այսինքն, չի նշանակում, որ Պողոսի հաջորդները կամ մեր ժամանակի հավատացյալները պիտի թունավոր օձեր բռնեն կամ թույն խմեն ու չվնասվեն, եթե վերստին ծնված են:

Նույնն էլ կարելի է ասել այդ համարում առկա «նոր լեզուներ» խոսելու մասին: Այդտեղ օգտագործված է γλώσσαις λαλήσουσιν καιναῖς «glossais lalesousin kainos» ձեւը[16], ուր «καιναῖς - kainos»-ը թարգմանվում է «նոր» բառով, չնայած հունարենն ունի νέος=նոր բառն էլ: Վերջինը նշանակում է «նոր» ժամանակային կտրվածքի մեջ, օրինակ՝ գրաբարը հին հայերենն է, իսկ նոր (=νέος) հայերենը՝ աշխարհաբարը: Իսկ kainos-ը այդ համարում նշանակում է «նոր» լեզուներ, բայց այնպիսի լեզուներ, որոնցով պիտի քարոզվեր ավետարանը աշխարհի բոլոր ծայրերում (Lampe, էջ 692 եւ 904): Հետեւաբար, Մարկոսի այդ հատվածում «նոր լեզուները» չի նշանակում անիմաստ հնչյունների արտաբերում, որոնք ներկայացվելու են որպես Աստծու նշան, այլ լեզու՝ որով պիտի ավետարանը քարոզվեր: Առավել եւս մեր ժամանակներում, երբ ոգեկանչության (սպիրիտուալիզմ) եւ հեթանոսության վերընձյուղումը տարբեր դիմակների տակ հեշտությամբ կարելի է ներկայացնել այդ նշաններով:

Մարկ. ԺԶ.17-18 համարների մարգարեական իրականացումը տեղի ունեցավ Գործք Բ.4-13 համարներում, հետեւաբար այնտեղ էլ լեզվախոսությունը (գլոսսալալիան) գոյություն ունեցող մարդկային լեզուներով խոսելու երեւույթն էր, որն ընդարձակեց եկեղեցին նոր անդամներով:

Հաջորդ հիշատակությունները լեզվափոսության մասին հետեւյալներն են. սամարացիների դարձը, **եթովպացի ներքինիի դարձը** (Գործք Ը. գլ.), **Կոռնելիոսի պատմությունը** (Գործք Ժ., 44-46) եւ **եփեսացիների դարձի պատմությունը** (Գործք ԺԹ. 1-10): Նշված համարներից միայն վերջին երկուսում է հիշատակվում այլ լեզուներով խոսելու փաստը: Եթե Սուրբ Հոգու ընդունումը անպայման պիտի ուղեկցվեր լեզվախոսությամբ, ապա այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու այդ չեղավ սամարացիների ու ներքինիի հետ: Մյուս կողմից, վերջին երկու դեպքերում, ուր խոսվում է լեզուներով խոսելու մասին, Գործքի հեղինակը ամենեւին չի ասում, որ դրանք պատահեցին մտահափշտակության (էքստատիկ) վիճակում գտնվելու ժամանակ եւ անհասկանալի արտաբերություններ էին: Ընդհակառակը, ավելի շուտ այդ լեզվախոսությունը (գլոսսալալիան) Գործք Բ.1-4 հատվածում նշված լեզվախոսության երեւույթն էր:

Այսպիսով, Գործքի պատմությունները ցույց են տալիս, որ լեզվախոսությունը (գլոսսալալիան) որպես նշան երեւաց հեթանոսների մեջ, որպես ապացույց այն տիեզերական առաքելության, որ Սուրբ Հոգին կարող է եւ պետք է գործի նաեւ ոչ հրեաների՝ հեթանոսների մեջ, երեւացող արտաքին նշանների ուղեկցությամբ, ինչպիսին է գլոսսալալիան, բայց ոչ երբեք մտահափշտակության (էքստատիկ) վիճակում գտնվելով, որն ավելի հեթանոսության գովերգություն կլիներ եւ դրանով հեթանոսներին չէիր զարմացնի:

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

[16] ὁ πιστεύσας καὶ βαπτισθεὶς σωθήσεται ὁ δὲ ἀπιστήσας κατακριθήσεται. σημεῖα δὲ τοῖς πιστεύσασιν ταῦτα παρακολουθήσει• ἐν τῷ ὀνόματί μου δαιμόνια ἐκβαλοῦσιν γλώσσαις λαλήσουσιν καιναῖς.